Դա կոչվում էր շընթըրկաճաց[12]: Զոքանչն այնուհետև դառնում էր փեսացուի մշտական հովանավորողը և ծածուկ ընդունում էր նրան տանը, երբ ամուսինը տնից բացակա էր լինում կամ քնած, երբեմն էլ քնած ձևանում: Պատահում էր, որ զոքանչը թույլ էր տալիս տղային իրենց մոտ քնելու, նույնիսկ պառկեցնում էր տղային աղջկա հետ մեկ անկողնում: Նրանք պետք է պառկեին որպես fնir ու ախպէր[13]: Տղային և աղջկան պսակադրությունից առաջ միասին պառկեցնելու թույլտվությունն առիթ եմ ունեցել գրանցելու նաև Հարևան Մեղրու շրջանում և Ագուլիսին մոտիկ Փառակա գյուղում:

Նշանադրությունից հետո երկու ընտանիքների միջև սկսվում էին խնամիական, մտերմական հարաբերություններ, այսինքն՝ երկու կողմերն իրենց վրա էին վերցնում իրար վերաբերմամբ խնամf, հոգատարություն ունենալու, իրար օգնելու և պաշտպանելու պարտականությունները[14]: Այդ է պատճառը, որ անկական և խնամի[15] բառերն ունեն բարէկամ նշանակություն և առօրյա գործածության մեջ իրար հետ շփոթվում են:

Տոների առիթով տղայի տնից ուղարկվում էին նվերներ՝ խօնչաճէր[16] Նավասարդին՝ լուս— մի սինիի, մէժմաճի վրա մի գավ գինի, մի շիշ օղի, միրգ, անպատճառ խնձոր կամ նուռ՝ մեջը վառած մոմ ցցած, մի շարղաթ և այլն: Մէժմաճիի շուրջը կպցրած էին լինում վառված ոսկեպատ մոմեր: Ավելի պարզ նվերներ տարվում էին Բի՛րգինդաճին[17] Բարեկենդանին, Մեծ պասի առաջին օրը, Միչինfին, իսկ Զատկին՝ կարմիր ձու և յուղով հաց, նույնպես մի գառ՝ ճակատը ներկած և վզին թաշկինակ կամ շարղաթ կապած: Այդ գառը, ինչպես և Զատկի օրն եկեղեցում մորթվող մատաղ եզը, կոչվում էր ախառ, ախառնը[18]: Վարդէվօրին՝ Վòirդòivòirին[19] տղան և աղջիկը միասին գնում էին խաչ: Գարնան զբոսանքներին տղայի տան աղջիկներն ու երիտասարդ հարսները հարսնացուին տանում էին իրենց հետ զբոսնելու:

Խօնչաճէրին հարսի տերը պատասխանում էր ուղարկելով տղային դարձ շշի պէրաճկալի կամ պօճի՝ ուլունքներից պատրաստած զարդարուն խցան՝ ժէվ, կòilպա, խալաթ և այլն:

Տղայի տանեցիք և մոտիկ ազգականներն արդեն կոչվում էին աղջկա կողմից պըտroճաճf, այսինքն պատroճի՝ կեսրայրի ազգ: Երբ տղայի ազգից մեկը աղբյուրի մոտ էր գալիս, նշանած աղջիկը վազում էր նրա կուժը ձեռքից վերցնում, լցնում և օգնում ուսին դնելու:

Երբ աղջկա տանը լինում էր հյուրասիրություն, փեսացուն ներկա չէր լինում հրավերին և առհասարակ աներոջ աչքից թաքնվում էր կամ տեսնելիս հեռանում: Զոքանչն էր, որ հարմարեցնում էր, իբր թե ամուսնուց ծածուկ, տղայի այցելությունները: Այս էլ, պետք է նկատվի իբրև մայրիշխանության ժամանակներից մնացորդ:

---

12 «Շընթըրի՛ր տէղա»՝ «շան պես տեղդ ընկա՛ծ մնա»: Այդպիսի հացերից մեկի մեջ պատահում էր, որ զոքանչը ծածուկ ձգում էր մի երկու կաթիլ աղջկա մեզից, որ տղան ավելի սիրով և ավելի անխզելի մնա նրա հետ:

13 Արծվանիկ գյուղի պառավ կանանց վկայությամբ:

14 Հմմտ. Աճառյան Հ., Հայերէն արմատ. բառարան, հ. II, էջ 525:

15 Մեղրու բարբառով՝ խնա՛մէ:

16 Խօնչա կոչվում է ոչ թե մատուցարանը, այլ նրա վրա դրած միրգը և այլ ուտելիքը, մի մէժմաճու վրա սիրուն տեղավորված, մեջտեղում մեծ մասամբ մի մոմ վառած: Կապանում՝ մաժմաճի:

17, 18, 19 Մեղրի: